Սույն թվականի **մայիսի 23-ին** ***Հայաստանի Սրտաբանների Ասոցիացիան***, ***Երևանի Քաղաքապետարանի, ՀՀ Առողջապահության Նախարարության*** և ***Լե Լաբողատուաղ Սեղվիե դեղագործական ընկերության հայաստանյան ներկայացուցչության*** աջակցությամբ Երևան քաղաքի մի շարք այգիներում, հանրային վայրերում իրականացրեց **«Առողջ Սիրտ»** խորագրով կրթական և տեղեկատվական միջոցառումը: Միջոցառման ընթացքում մեր սրտաբանները անցորդներին տրամադրեցին սրտի առողջությանը առնչվող կրթական նյութեր, պատասխանեցին նրանց հուզող հարցերին, որոնք վերաբերում էին առողջ ապրելակերպին և սրտի առողջության պահպանմանը:

*Շնորհակալ ենք մեր սրտաբաններին՝*

*Լուսինե Թադևոսյան, Նարինե Ավետիսյան, Նելլի Ղուկասյան, Նարինե Մինասյան, Լաուրա Ասատուրյան*










